ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

N 955 - Ա

«ՆԱԽՆՅԱՑ ՀԵՏՔԵՐՈՎ» ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌՆԵՐԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Բարեգործության մասին» օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 3-րդ կետերը՝

1. Բարեգործական որակել «Նախնյաց հետքերով» մշակութային հասարակական կազմակերպության հասցեով ստացված ներքոհիշյալ ապրանքների ներմուծման և Լեռնային Ղարաբաղից տեղահանված անձանց անհատույց հանձնման ծրագիրը՝

1) Բուլղարիայի Հանրապետության «Արաքս» հիմնադրամի կողմից ուղարկված կենցաղային օգտագործման ապրանքները՝ 86 տեղ, 7,172 կգ ընդհանուր քաշով, 20,297.8 եվրոյին համարժեք դրամ ընդհանուր արժողությամբ՝ ներառյալ փոխադրման ծախսերը, բեռի ցանկը՝ համաձայն հավելվածի (Երևանի մաքսային սպասարկման կենտրոն-մաքսատուն, վարչություն).

2) Բուլղարիայի Հանրապետության «Գոռատա. ԲԳ» հիմնադրամի կողմից ուղարկված կենցաղային օգտագործման ապրանքները՝ 14 տեղ, 2,560 կգ ընդհանուր քաշով, 6,896 եվրոյին համարժեք դրամ ընդհանուր արժողությամբ՝

ներառյալ փոխադրման ծախսերը, բեռի ցանկը՝ համաձայն հավելվածի (Երևանի մաքսային սպասարկման կենտրոն-մաքսատուն, վարչություն):

2. «Նախնյաց հետքերով» մշակութային հասարակական կազմակերպությանը՝ նշված բեռների համապատասխան ձևակերպումներն ու հանձնումն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հունվարի 16-ի N 66-Ն որոշմամբ հաստատված բարեգործական ծրագրերը բարեգործական որակելու և գրանցելու կարգի 25-րդ կետով սահմանված կարգով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Տ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

Երևան

29.12.2023
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ